ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-23/01 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան **07 սեպտեմբերի 2022թ.**
Ժամը 10:00

Հանձնաժողովի նախագահ՝

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ՝ Է. Բասենցյան

Անդամներ՝

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության իրավական աջակցության բաժնի գլխավոր մասնագետ՝ Դ. Դավթյան

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետ՝ Ս. Սահակյան

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի տնտեսվար՝ Գ. Ղափլանյան

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի պահեստապետ՝ Ա. Միքաելյան

Հանձնաժողովի քարտուղար՝
ՎԱ ԳԿ գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Ա. Նիկոլայան

---

1. Գնման ընթացակարգի վերաբերյալ

1.1 Վարչապետի աշխատակազմի 2023 թվականի կարիքների համար **մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների (պահնորդական ծառայություններ)** ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթի շրջանակներում 06.09.2022թ. ստացվել են հարցադրումներ, որոնց վերաբերյալ 07.09.2022թ. տրամադրվել են պարզաբանումներ.

Հարցադրում N 1

Հարգելի գնահատող հանձնաժողով՝ քարտուղար Ալիսա Նիկոլայան

ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-23/01 ծածկագրով անցկացվող գնանշման հարցման (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության 1,1 կետում գնման գին է սահմանված 6,000,000 ՀՀ դրամ 12 ամսվա դիմաց և ծառայությունները պետք է մատուցվեն 01,01,2023 թվականից, ուստի առաջանում են հարցեր, որոնց խնդրում եմ տալ պարզաբանում՝

1. 2023թվականից նվազագույն աշխատավարձը բարձրանալու է և որպես զուտ աշխատավարձ մեկ անձին հաշվարկվելու է 108000 ՀՀ դրամից ոչ պակաս, ուստի մրցույթի տեխնիկական բնութագրով պահանջվում է ամսական նվազագույնը 5 անձ և զուտ նվազագույն աշխատավարձի հաշվարկով 12 ամսվա համար զուտ աշխատավարձը կազմում է 6,480,000 ՀՀ դրամ,

2. Մրցույթի տեխնիկական բնութագրի պահանջների իրականացման համար պահնորդական ծառայություններ մատուցող կազմակերպությունը պետք է կատարի լրացուցիչ ծախսեր՝ այն ներառելով

գնային առաջարկի մեջ, այսինքն նվազագույն ծախսը ամսական 75,000 դրամը 12 ամսվա համար կազմելու է 900,000 ՀՀ դրամ, հետևաբար պարտավոր է ներառելու գնառաջարկի մեջ .

-Ի՞նչու է գնման գինը ներկայացվել ցածր, եթե այն կազմում է մոտ 7,300,000-ից 7,400,000 ՀՀ դրամ.

-Արդյո՞ք մրցույթի հանձնաժողովը հաշվի է առել վերը նշված հաշվարկները՝ տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանեցնելով.

-Արդյո՞ք 1-ին կետում ներկայացված գումարից ցածր գին առաջարկող կազմակերպության հետ կնքվելու է պայմանագիր, եթե այո ապա ինչու՞

Պարզաբանում N 1

Հարգելի գործընկեր
Վարչապետի աշխատակազմի (Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի) 2023 թվականի կարիքների համար՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող

ծառայությունների (պահնորդական ծառայություններ) ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎԱ-ՍԱՏՄ-ԳՀԾՁԲ-23/01» ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագիրը կազմվել է հաշվի առնելով պատվիրատուի կարիքները, դրանք ամբողջությամբ և հստակ նկարագրում են ծառայության հատկանիշները, ինչպես նաև նախորդ տարիներին կազմակերպված վերոգրյալ ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգերի շրջանակներում մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, որոնց արդյունքում կնքվել են պայմանագրեր համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի.

2. Ընտրված մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով,

Պետական գնման գործընթացի կազմակերպման բոլոր դեպքերում Պատվիրատուն ինքն է գնահատում իր կարիքները, տվյալ պարագայում որպես վերոգրյալ ծառայությունների մատուցման գնման գին սահմանվել է 6.000.000 (վեց միլիոն) ՀՀ դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Է. Բասենցյան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Դ. Դավթյան	ԳՊ/ԳԱ	
	Ս. Սահակյան	ԳՊ/ԳԱ	
	Գ. Ղափլանյան	ԳՊ/ԲԱ	
	Ա. Միքաելյան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Ա. Նիկոլայան	ԳՊ/ՄՀմ	